





նեղոյն գործին այն կերպ ըլլալը ցուցը  
նէ։ Առջի անգամ կրնանք Մօնս.  
Բիւիմի հարցնել, թէ յիշեալ երեք  
բառերով, երեք զանազան եւ տար-  
բեր յանգանք, թէ մի եւ նոյն անո-  
րոջ յանգանք մը կ'իմանայ։ Եթէ մէկ  
յանգանքին ինքն ալ չգիտեր թէ ինչ  
անուն տայ եւ անոր համար մեծ եւ  
ականջ խայթող բառեր գործածե-  
լով, մեծ յանգանք ձեւացնել կ'աշ-  
խատի, կը խնդրեմք որ առաջ իր  
միտքը բացատրէ եւ մեկնէ, որ մենք  
ալ իրեն կարենամք պատասխանել  
եթէ երեք զանազան եւ տարբեր  
յանգանքներ կ'ուզէ իմացնել, այն ա-  
տեն կը պարտաւորի երեք զանազան  
եւ տարբեր ցուցման եւ հաստա-  
տութեան։ Ապա թէ ոչ յանգանք  
ներսող եւ չցուցնող, ամբաստանող  
եւ չհաստատող մարդուն գրպար-  
տիչ կ'ըսեն, եւ այնպիսին ոչ թէ ան-  
տիի աշխարհք Աստուածային դասա-  
ւորի, հասպա այս աշխարհքի մէջ ե-  
կեղեցական եւ քաղաքական դատա-  
ւորներու առջեւ ալ քաջաւած ատե-  
նը կը պարտաւորի կամ ինքզինքը ար-  
դարացնելու եւ խօսքը հաստատելու  
եւ կամ արժանաւոր պատիժը կրելու  
եւ հատուցումը վճարելու։

Չգոյ կենայ Մօնս. Բիւիմ, եթէ  
աշխարհք եւ քաղաք կայ ուր եկե-  
ղեցական եւ հոգեւորական կերպու-  
թանքի տակ անիրաւութիւններ եւ  
գրգռողութիւններ ընելու թողտու-  
ութիւն կայ, մեր քաղաքը եւ մեր  
տերութիւնը անոնցմէ չէ։ Լաւ կըլ-  
լայ եթէ խօսքը չզուրկած հաստատու-  
թիւնը պատրաստէ, կամ թէ երկուքը  
մէկտեղ դնէ որ վտանգէ աղատ ըլլայ։

Չարը ընդդէմ օրինաց է, հեր-  
ձուածողականը ընդդէմ եկեղեցւոյ,  
հերետիկոսականը ընդդէմ հաւա-  
տոյ, եթէ օրէնք, եկեղեցի եւ հա-  
ւատք Գեր, Հասունի վրայ կայացած  
է, այն ատեն միայն ազգին գործը  
չար է ընդդէմ Հասունեան օրինաց,  
հերձուածողական ընդդէմ Հասուն-  
եան եկեղեցւոյ, եւ հերետիկոսական  
ընդդէմ Հասունեան հաւատոյ։ Մենք  
այդպիսի օրէնք, եկեղեցի, եւ հա-  
ւատք չենք ճանչնար, եւ ալ այս  
կերպ չարութիւն, հերձուած եւ հե-  
րետիկոսութիւն կրնանք հնարել  
եթէ կայ օրէնք, եկեղեցի եւ հաւատք  
որ իր սեփական եւ հնաւանդ ի-  
րաւանց եւ արածունութեանց յաւիը-  
տակութեանը հաւանելու պարտաւո-  
րէ, եւ յաւիըտակողին դէմ դները  
արգիլէ, այն ատեն միայն կրնայ  
Մօնս. Բիւիմ մեր վրայ ալ չարու-  
թիւն, հերձուած եւ հերետիկոսու-  
թիւն գտնալ, սակայն ոչ ինքը այդ  
օրէնքը, եկեղեցին եւ հաւատքը դը-  
տած է կամ կրնայ գտնալ, եւ ոչ մենք  
իր մտայածին օրինաց, եւ եկեղեց-  
ւոյն եւ հաւատքին կը հետեւինք։

Մենք գիտենք եւ կընդունինք ա-  
ռաջնորդաց հնազանդելու օրէնքը,  
սակայն չենք գիտեր թէ որ գրած  
կայ կամ ո՞ր հրամայած է որ ընդդէմ  
արդարութեան եւ ընդդէմ իրաւանց  
հրամաններու ալ հնազանդելու է,  
Գիտենք եւ կ'ընդունինք եկեղեցւոյ  
առաջնորդները, բայց հնարքներով  
եւ խարէութիւններով եկեղեցւոյ մէջ  
մտնողները իբր ճշմարիտ առաջնորդ  
ճանչնալու պարտաւորութիւն դեռ  
գտած չենք։ Գիտենք եւ կ'ընդու-  
նինք եկեղեցւոյ իշխանութիւնը, բայց  
ուրիշին ինչքերն ալ յափշտակելու եւ  
սեփականելու եւ անձերն ալ բո-  
նաբարելու իշխանութիւն ունենա-  
լը չենք տեսած։ Գիտենք եւ կ'ըն-  
դունինք Պետրոսի եւ իր յաջորդաց  
իշխանութիւնը, բայց իրենց գլխա-

ւորութեան համար ուրիշ իշխանու-  
թիւններուն ոչնչանալը չենք գտած։  
Գիտենք եւ կ'ընդունինք ընդհանուր  
եկեղեցւոյ Ս. Պապ մը, բայց ընդհ-  
եկեղեցւոյ մէջ պատրիարք չենք ըսած։  
Գիտենք եւ կ'ընդունինք ուղղափառ  
հաւատքը բայց հաւատոյ մասանց մէջ  
ոչ ալ դրամական կտաւարութեան  
յօդուածներուն հանդիպած ենք։

Այդ ամենը թէ որ մէջ տեղ ելան  
ոչ փրկատու, ոչ առաքելները, ոչ  
ժողովներն են այդ նոր վարդապե-  
տութեան հեղինակները, Հապա ե-  
կեղեցւոյ մէջ զանազան ուսման շա-  
հափութիւնը եւ վառասիրութիւնը  
որոնց համար մարդաբնայաւ Պօղոս  
Առաքեալ, թէ «գայեցէն զայլք յա-  
վըշտակողք ի ձեզ, որ ոչ խնայեսցին  
հօտիդ» եւ թէ «խօսիցեն իմիւս ձը-  
դեղ զաշակեցման զինի իւրեանց»  
մենք գիտենք փրկատու, որ ըսաւ,  
«որպէս առաքեաց զիս Հայր եւ ես  
առաւելմի զձեզ»։ Մենք գիտենք ա-  
ռաքելները, որք ըսին թէ «Եդ-  
ղձեղ հոգին Սուրբ տեսուչս հովուել  
դժողութեան տեսաւ»։ մենք գիտենք  
ժողովները, որք վճռեցին, թէ ան  
խախտ պիտի մնան Պատրիարքական  
աթոռոց իրաւունքները եւ արտօնու-  
թիւնները։ Մենք գիտենք պապերը  
որք վարդապետեցին թէ եւ ոչ Հռովմ-  
մայ աթոռը կրնայ Սրբոց հարցաւան-  
դութիւնները այլայլել եւ եկեղեցւոյ  
իրաւունքները խախտել։ Մենք գի-  
տենք Սուրբ Հայրերը որք սորվեցու-  
ցին թէ եկեղեցւոյ սովորութիւննե-  
րը եւ աւանդութիւնները եւ կա-  
նոնները ամենայն ոք հաւատարմու-  
թեամբ պիտի պահէ։

Գիտենք որ այդ պարսկէն բնա-  
մէկը աղատ չէ, եւ թէ նոյն իսկ Հը-  
ռովմայ քահանայապետները երբեմն  
կը խօստանան ժողովոյ վճիռները եւ  
Սուրբ հարցաւանդութիւնները պահ-  
պանելու։

Սակայն Մօնս. Բիւիմ իր ծայ-  
րայեղ պահանջողութեանց իբր վեր-  
ջին ապաւէն վատականու ժողովոյն  
այն անուանի եւ արդէն ծանօթ յու-  
րիս 18 ին եղած չորրորդ նստին վը-  
ճիւրը մէջ տեղ կը բերէ, եւ անոր վը-  
րայ կուզէ կանգնել ազգին չարու-  
թեան, հերձուածողութեան եւ հե-  
րետիկոսութեան մտայածին չէնք։

Մենք Մօնսիւնօրին կը յիշենք  
թէ այդ յիշած չորրորդ նստին բաղ-  
մաթիւ Աստուածաբան, իմաստուն եւ  
սրբակեաց եպիսկոպոսունք ոչ երբէք  
յանձն առին Ներկայ գտնուիլ թէ  
նոյն երեւելի Հայրերէն չատերը ա-  
ռաքելական համարձակութեամբ ի-  
րենց դժկամակութիւնը գրով յայտ-  
նեցին, թէ Արեւելեան ուղղափառ ե-  
կեղեցւոյ ընդհանրութիւնը իր հնա-  
ւանդ առաքելական աւանդութեանց  
անխախտ մնալը յայտնի, բացայայտ  
եւ անպարտաւոր յայտնեց եւ պա-  
հանջեց։ Թէ միշտ յարգ ուղղափա-  
ռաց մէջ մասին մէջ այդ չորրորդ նըս-  
տին վճիռները ընդունելութիւն չեն  
գտնար եւ դժուարութիւն կը կրեն,  
թէ սիւնհոդոսի մը դործոց արժէքը  
քաղաքական արտաքին գործոց պաշ-  
տօնեայ Գարտինալ Սենտէլիյի չըր-  
չարեականով չստուգուի, թէ դեռ  
օրինաւորապէս չլրացած եւ վերջը ան  
յայտ ժողովոյ մը արժէքը զիրաւ  
վճռել անհնար է։ Թէ... եւ ընէ։ Սա-  
կայն Հոգեւոր ուղղակի ալ իր բերած  
վկայութեան իմաստը բացատրել։

Ինչ է այն վկայութեան իմաստը  
ու միտքը։ Ս. Պապին իշխանութեան  
կերպը եւ բնութիւնը, Այդ խնդիրը  
մեկնելով, յիշեալ Վիսնոնը կ'ըսէ թէ

այն իշխանութեան ցեղը ուղղակի է,  
անմիջական եւ ընդհանուր, ենթա-  
կայնեան են, կրօն, ամենայն եկեղե-  
ցին, հովիւք եւ հովուեալք, եպիս-  
կոպոսունք ու հաւատացեալք, առա-  
կայներն ալ կ'ըսէ, եւ հաւատք, բա-  
րոյք, եւ ընդհանուր սովուեալ եկե-  
ղեցւոյ վերաբերեալ բարեկարգու-  
թիւնը։ Այսինքն այն բարեկարգու-  
եկեղեցին։ Չենք ուղեր հօս այդ կա-  
նոնին արժէքը կամ ոչովք քննել, կ'ի-  
մացնենք միայն որ վարդապետութեամբ  
բարեկարգութիւն բարեկարգութեան  
հետ կը չլիթէ Մօնս. Բիւիմ, այ-  
սինքն տիեզերական բարեկարգու-  
թիւնը եւ առանձին եկեղեցւոյ բա-  
րեկարգութիւնը եւ կտաւարութիւն  
թիւնը։ Կանոնը առջինը կը յիշէ,  
Մօնս. Բիւիմ երկրորդը կ'իմանայ,  
Այլ չիմանար թէ ուրիշ է ընդհանուր  
սովուեալ եկեղեցւոյ վերաբերեալ բա-  
րեկարգական կանոն մը, եւ ուրիշ է  
Հայոց եկեղեցւոյն եպիսկոպոսաց ընտ-  
րութիւնը եւ ընչից մատակարարու-  
թիւնը։ Ապա թէ ոչ Մօնսիւնօր Բիւի-  
մի յառաջ բերած կանոնը հակասա-  
կան կըլլար փոքրեկամ ժողովոյն որո-  
չողութեանը հետ, հակասական կըլ-  
լար, եկեղեցւոյ բազմադարեան  
գործածութեանը հետ, հակասա-  
կան կըլլար Հռովմայ քահանայա-  
պետաց երբեմնի հետ, հակասական  
կըլլար Սասունեան իրաւանց ան-  
տի եպիսկոպոսաց իրենց հօտին վրայ  
ունեցած իրաւասական իշխանութեան  
հետ, մէկ խօսքով հակասական կ'ըլ-  
լար Պօղոս առաքելոյն եւ փրկատուի  
Տեառն մերոյ խօսքերուն հետ, զո-  
րոնք յիշեցնենք եւ որոնք կրնայինք  
յիշել։ ապա թէ ոչ ուղղափառ եւ  
եկեղեցւոյ մէջ նոր վարդապետութիւն  
հնարուած կ'ըլլար, թեմական եպիս-  
կոպոսաց իրաւասական իշխանութիւ-  
նը սակ վտխաբերական իշխանու-  
թիւն մը ճանչնալով, ապա թէ ոչ Ս.  
եւ ուղղափառ եկեղեցւոյ յայտնի ա-  
ւանդութիւնը եւ արդոց հարց վար-  
դապետութիւնը խանգարուած կ'ըլ-  
լար եւ եկեղեցւոյ կտաւարութեան  
կարգը եւ օրէնքը վեր ի վայր չըլած։

Այս է Հայ կաթողիկէ ժողովը-  
եան դործոյն մեկնութիւնը, զորն որ  
առանձին գիրքեր ու տետրակներ եւ  
հրատարակութիւններ ալ պաշտպա-  
նեցին եւ երկարօրէն ցուցուցին, եւ  
մեզի հարկ չկայ երկարել։ Մօնսիւնօր  
Բիւիմ այդ հրատարակութիւններուն  
համար ալ սխալ ներշնչութիւն է, կ'երե-  
ւայ թէ չէր ուղեր խնդրոյն Աստու-  
ածաբանական կերպով եւ անստեղծ  
փաստերով շատագոյնուիլը տեսնալ  
որպէս զի երբ չորս խօսք քովէ քով  
գնելով, առանց ցուցման եւ առանց  
պատճառաբանութեան յանգանքներ  
գտնայ եւ գտապարտութիւնները ը-  
նէ, ամենքը զլուս ծաւեն թէ «նա  
ասաց»։

Մեր արհիւրապաւիտ եպիսկոպո-  
սունք այդ ընթացքին հետեւիլ չու-  
ղեցին, իրենք կողմնակցութեան չա-  
հու, դիւրութեան եւ հանգստեան  
փաստերէն սեղի, արդարութեան եւ  
ճշմարտութեան փաստերուն տեղի տը-  
ւին։ Գիտենք եւ գիտեմք որ անհնար  
է Հայ ազգը գտապարտուի, երբ նոյն  
հոգւով եւ նոյն հատապարտութեամբ ու-  
րիշ Արեւելեան ազգերն ալ նոյն ընդ-  
դիմութիւնը կը ցուցնեն, եւ ամենե-  
ւին գտապարտութեան արժանի չեն  
համարուի։ Սրբաբարութիւնը եւ իրա-  
ւունք մէկ քանի չափ չունի, որ ու-  
ղած ատեն ուղածովն վարուին Բը-  
րօրականեան եւ իր արբանեակները։

Մօնսիւնօր Բիւիմ մեր արքեպիս-

կոպոսաց ընթացքը չը հաւերի եղեր,  
երբէք զինքը հաւանելու չենք պար-  
տաւորեր։ Բայց ինքն ալ մեզ չը հա-  
ւանելու չը պարտաւորէ։ Մենք չը հա-  
ւանելու պատճառները կը ցուցնենք,  
չը հաւանելուն համար քանի մը ծուռ  
մեկնութեամբ կանոններէն զտու, միմալ  
այս կ'ըսէ թէ Պապէն առանձին հը-  
րաման ունիմ։ Կը զարմանալ թէ  
ինչպէս յուսովար եւ մայիս ամիսներուն  
մէջ ժողովրդեան եւ քահանայոց ըն-  
թացքը չը հաւանելուն համար ուղղա-  
կի Պապին կողմանէ յայտարարութիւն  
ներ հրատարակուեցան, եւ հիմայ ե-  
պիսկոպոսաց համար, որ աւելի իմն  
են քան զժողովուրդն եւ քահանայս  
մտնողները Բիւիմի յանձնուեր չը հա-  
ւանելու պաշտօնը։ Մանաւանդ Հռով-  
մայ այդ չիլով օրերուն մէջ ինչ կեր-  
պով ունեցաւ այդ հրամանը, այն ալ  
խորհրդածութեան արժանի է։ Եթէ  
ըսելու ըլլանք թէ այդպիսի հրաման  
ներ կանխիկ առնուած են Պապէն ա-  
ռանց անոր գիտակցութեան եւ որո-  
շողութեան, բայց եթէ երբ գործա-  
ծութիւնէն ետք իրեն իմաց տուի,  
կարծեմ թէ օտար եւ կեղակարծ են  
թաղութիւնները չենք ըլլար։ Ինչ-  
պէս ըլլայ, մեզի բաւական է ճշմար-  
տութիւնը եւ իրաւունքը, գարտի-  
նալ Պառնասպոյի կամքը, Գեր. Հա-  
սունի յամառութիւնը, եւ մտնողներ  
Բիւիմի ծառայական գործադրու-  
թիւնը ոչ մեր գործոց եւ ոչ մեր խղճ-  
միտանայ կանոն կամ ուղեցոյց կրնայ  
ըլլալ կամ կուղեր ընել։

Հայ կաթողիկէ Արեւելեան  
Վարդապետ մը։

ՀԱՎԱՏԻՍՈՒԹ ԳԻՏԻՒՆԵՎԻԹԵ

Սաարպրիւք 9 հոկ. — Հէր  
կիւն Մեջին դաւէտ վէ մէթերիպէրին  
տէն չէտիտէն թօք ամէնէն օլունույօր  
խաւէն, հէնուզ նէթիճէտի մալիւմ օլ  
ամալը տըր։ Տիւնթի Բրուսիլալար  
թարափնտան չօք ետարալ վար տըր։  
Պու ախլամ 600 ետարալ ուղադ մա-  
հէլլէ նազլ օլունմուշ տուր։

— Ծանկայի 22 սեպ. — Նէվ-  
իւնքտէ վազը գաթօլիք քիլիսէսի  
խարապ վէ նապէտիտ օլունու տուր։  
Թին։ Գիւնթի վուգու պուլան գաթլ  
ու իտամ մատտէսի սուլէ իւղըթ թէթ  
վիլի օլունայաճաղ կիւն օլէ կիւն թա-  
սիգ օլունույօր։ Չինիլէրին մուհարէ-  
պէ իսթէլէն ֆրգալը, բրէնս ֆիւնկ  
վէ սուլէ թարափտարը ֆրգալընան  
չօք վէ գուլիլթիլ տիւր։ Գօրլու վար  
տըր քի, մուհարէպէ իսթէլէն ֆրգա-  
լընանքը Լուրաւալա վերտիլի պող-  
ղունդուլարը խապէլլէրին իշիթիւք  
սէ, տահա զիյատէ գուլիլթիլ չէճէք  
տիւր։

Ծանկայի չէհրիտէ Էրոքալըլար  
պէթիւք էնալիլ վէ գօրլու չէքիլօր-  
լար։ «Նօրթ Զինիլ Էրալալ» նամ ին  
կիլիլ զաղէլալը, ետլընդ չէհրի մէզ-  
պուրտէ 13 միլիօն քիլի հիտապ օլուն-  
մադալ օլան էճնէպիլլէրին մալ վէ ճան-  
լարըն մուհաֆալա իշին Հինտիթան  
տան օրայա ասքէր ճէլլիլին նապիթթ  
իթմէլալ տիւր։

— Օտէսա 11 հոկ. — Ճէնէրալ  
իլիսթիլ ֆ ճէնապլէրի, վարօրտուն  
չըգտըլը վաղըթ տիւլլիլ օլունուլուն-  
տան։ Սէն։ Բէթիլլէրալ օլունուլուն  
ճուլուլունու թաճիլլէն տէլամ իտէ-  
մէյօր։

— Պերլին 11 հոկ. — Սթրալ-  
պուրիւն թէպիմ օլունուլուն վաղըթ,  
1100 բարէ թօրտան մատաւ, 12,000  
շաքօ, 6,000 գանթար միւհիմմաթը  
հարպիլէ, վէ 30 լոգօմթիլ Բրուսիլա-



— Լիպեթի չամ զազէթաւ տէր  
քի, Թայմէ զազէթաւ տէր տէրն օ-  
լունան պիր Պէրլին մէքիւ պունտա  
մատիչալ Պաղէնտէն պիր Բուսպալ  
զապիթի օլունան թէքիլիքէր սըղֆ  
արաճիք օլուպ, օլ պապան Մէցտէն  
փարիսէ սահնէ խապէր կէսմիշ տիր  
Մարէշալը միւմայիլէյճ, Մէց գալէա-  
սը ին, Գժմանտա իլլէտիլ օրտուսի,  
չարօթնուտ խրտիթիլնէ սաղլամագ  
նիլէթիլնտէ օլտուղնուտ նէ պիր քիմ  
սէյէ աեմիշ վէ նէ տէյլէ պիր էֆ-  
քետառա զահիպ օլմայա հիլ պիր քիմ  
սէյէ Էնէպիլիէթ վէքմէմիշ տիր, Մա



